ՇԱՄԱԽՈՒ ԳԱՎԱՌԻ ԳՅՈՒՂԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ս. Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պատմական Շամախին (Շիրվանը) իր համանուն գավառով հնագույն ժամանակներից հայաբնակ է եղել. «Հայ գյուղերը Շամախվո շրջակայքում գոյություն ունին շատ հնուց, տասնյակ դարեր առաջ...»[1]։ Միջնադարում գավառի տարածքում ծաղկուն էին ավելի քան 200 հայաբնակ շեներ, որոնք քիչ կորուստներ տալով դիմացան ու հասան մինչև XVIII դ. առաջին քառորդը, երբ մահմեդական իշխողները, օգտվելով քաղաքական անկայուն իրավիճակից, սկսեցին սաստկացնել կրոնական հալածանքները և բռնի մահմեդականացումը։ Դրան հետևեց շատ գյուղերի ամայացումն ու բնակչության փրկված մասի արտագաղթը (գլխավորապես Հյուսիսային Կովկաս, հատկապես Ղղլար, Մոզդոկ, Աստրախան)։ Զգալի թվով գյուղացիներ, հալածանքներից ու բնաջնջումից աղատվելու հույսով, ուրացան քրիստոնեությունը և ընդունեցին մահմեդականություն։ Միաժամանակ գտնվեցին գյուղեր, որոնց բնակիչները կենաց-մահու հերոսական անհավասար պայքարի շնորհիվ կարողացան պահպանել հարազատ կրոնն ու ազգային նկարագիրը։

Ցարական տիրապետության հաստատման շրջանում գավառի տարածքում մնացել էին մոտ 50 հայաբնակ գյուղեր։ XIX դ. երկրորդ կեսից սկսած մինչև 1918 թ. Շամախու գավառի բոլոր գյուղերը ապրում էին նկատելի աշխույժ կյանքով, սակայն 1918—20 թթ. ընթացքում օսմանյան և մուսավաթական բանդաների համատեղ ջանքերով կազմակերպված հայերի կոտորածներից հետո իսպառ ու անդարձ հայաթափ դարձավ շեների մեծագույն մասը։

Ներկայումս քիչ թվով գյուղեր դեռևս ունեն փոքրաթիվ հայ բնակչություն։ Հին Շամախու գավառի տարածքում այժմ կազմավորված են վարչական մի քանի շրջաններ (Իսմայիլլի, Աղսու, Շամախի)։ Ներկայացնենք Աղսուի վարչական շրջանի տարածքում պահպանված ներկայիս ու նախկին հայկական գյուղերն ու մշակույթի հուշարձանները։ Աղսուի շրջանը կազմավորվել է 1943 թ. հոկտեմբերի 8-ին։ Այն սահմանակից է Շամախու, Քյուրդամիրի և Իսմայիլլիի շրջաններին։ Զբաղեցնում է 1020 քկմ տարածք։ Բնակչությունը՝ 46500 մարդ (1976, հունվարի 1)[2], որից միայն շուրջ 1000-ը հայեր են։ Ունի մեկ քաղաք (Աղսու շրջկենտրոնը) և 79 գյուղ։ Մինչև 1918 թ. շրջանի ներկայիս տարածքի հյուսիսային՝ նախալեռնային գոտում հայաբնակ էին 6 գյուղեր. Գյուրջևան, Հնդար, Գյուրդա, Քոհլուճ, Նորշեն և Թալիշ։ Սրանցից որևէ մեկի հիմնադրման ժամանակաշրջանի վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել, սակայն տեղերում առկա հայկական պատմաճարտարապետական հուշարձանները դրանց պատմությունը տանում են դարերի խորքը։ Ավելի աղքատիկ են գրավոր աղբյուրներն ու հիշատակությունները։ Սրանց փոխարեն անհամեմատ առատ են արխիվային վավերագրերը, որոնց հիմնական մասը վերաբերում է XIX դարին։ Վերջիններիս շարքում թերևս մեծ արժեք ունի 1796 թ. մի վավերագիր, ուր երկրամասի հայաբնակ շատ գյուղերի թվում հիշված են նաև Գյուրդա, Անգար (Հնդար),

---

[1] Հայաստանի պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՊԿՊԱ), ֆ. 237, ց. 1, դ. 639, թ. 37։

[2] Ադրբեջանական Խորհրդային Հանրագիտարան (ադրբեջաներեն), հ. 1, Բաքու, 1976, էջ 113։

ենգիքենդ (Նորշեն) և Գորջյուան (Գյուրջևան) գյուղերը[3]։ Վիճակագրական տվյալների համադրումն ու ուսումնասիրումը ցույց է տալիս, որ ամբողջ XIX դարում առավել բազմամարդ էին Գյուրջևան և Հնդար գյուղերը, ապա Քոհլուճը և մյուսները։

Նշված վեց գյուղերում բնակչության աճի փոփոխությունները XIX—XX դդ. ունեն հետևյալ պատկերը.

Տարեթիվ	Գյուրջևան		Հնդար		Քոհլուճ		Գյուրդա		Նորշեն		Խալիշ	
	տուն	բնակիչ	տուն	բն.	տուն	բն.	տուն	բն.	տուն	բն.	տուն	բն.
1861[4]	120		101		31		17		8		15	
1875[5]	175		100		61		26				63	
1887[6]	240		131		52		30		16		18	
1890[7]	242	1225	131	701	52	357	30	150	16	76	18	75
1901[8]		1542		946		373		135		110		67
1902[9]		1570		978		388		138		110		69
1905[10]		1681		1005		412		148		112		72
1907[11]		1624		1123		426				90		
1908[12]		1767		1005		455		151		112		73
1909[13]	293	1636	135	918	72	537	33	188	19	116	4	24
1912[14]	320	1841	135	1050	72	405	28	160	19	118	4	77
1914[15]		1743		1048				189		136		
1981[16]		726										
1986[17]		546		176		56		42		17		
											Անմարդաբնակ	

Բացի նշված հայաբնակ գյուղերից, ներկայիս Աղսուի շրջանի հյուսիսային մասում՝ նախալեռնային գոտում, կան նաև մի քանի դավանափոխ հայերի գյուղեր (այժմ համարվում են ադրբեջանցիներ), որոնցում կամ դրանց շրջակայքում ևս պահպանվել են հայ մշակույթի հուշարձաններ (օրինակ՝ Գյանդխան, Քյալվա և այլ գյուղերում)։ 1988 թ. այս գյուղերի հայ բնակչու-

[3] История, география и этнография Дагестана на XVIII—XIX вв., под ред. М. О. Ковсена и Х. М. Хашаева. М., 1958, с. 167.

[4] Մ. Սմբատյան, Նկարագիր սուրբ Ստեփանոսի վանաց Սաղիանի և մյուս վանորեից և ուխտատեղաց ևս և քաղաքացն և գյուղորեից, որք ի Շամախիո թեմի, Տփխիս, 1896, էջ 139։

[5] Сборник сведений о Кавказе. Очерк виноделия Кавказа т. III, Тифлис. 1875 с. 442, 460, 462.

[6] ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 104, թ. 33։

[7] Մ. Սմբատյան, նշվ. աշխ., էջ 139։

[8] ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1—2, գ. 905, թ. 276—282։

[9] ՀՊԿՊԱ, ց. 1, գ. 10044, թ. 153—159։

[10] ՀՊԿՊԱ, գ. 10403, թ. 170—172։

[11] ՀՊԿՊԱ, գ. 240, թ. 6։

[12] ՀՊԿՊԱ, գ. 10837, թ. 186—188։

[13] ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1835, թ. 15—16։

[14] ՀՊԿՊԱ, գ. 1921, թ. 13։

[15] Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914. с. 110—129.

[16] Ադրբեջանական խորհրդային Հանրագիտարան, հ. 6, Բաքու, 1982, էջ 127։

[17] Տվյալները վերցրել ենք տեղում՝ գյուղխորհրդի մատյաններից։

թյունը մեծ մասամբ բռնել է արտագաղթի ճամփան, գլխավորապես դեպի Հեն։ Ներկայումս գյուղերում բնակվում են սակավաթիվ հայեր։ Արտագաղթը շարունակվում է։

Գյուրջևան։ Այս գյուղը իր աշխարհագրական բարենպաստ դիրքի շնորհիվ ինչպես հնում, այնպես էլ այժմ մի շարք գյուղերի համար հանգուցակետ է։ Այստեղ են խաչվում Գյուրդա-Հնդարից, Գյանդխան-Նորշենից, Քոհլուճից եկող և ապա դեպի Հարավ՝ շրջկենտրոն տանող (13 կմ) ճանապարհները։ Այս հանգամանքը դրական նշանակություն է ունեցել գյուղի բնակչության արագ աճի ու ավելացման համար։ Եվ պատահական չէ, որ ծխերի թվով Գյուրջևանը միշտ էլ գերազանցել է հարևան գյուղերին։ Գյուղի վիճակագրությանը վերաբերող մեզ հանդիպած ամենահին վկայությունները XIX դ. կեսերից են։ Հայտնի է, որ 1853 թ. այն ուներ 100 տուն հայ բնակչություն[18]։ Գյուրջևանի բնակչության թվաքանակը անընդմեջ աճել է մինչև 1918 թ., երբ երկրամասի հայաբնակ տասնյակ այլ գյուղերի օրինակով այն ևս մեծ կորուստներ տվեց օսմանյան և մուսավաթական թուրքերի հարձակումների հետևանքով։

Հետազոտողները գյուղի բնակչության տեղաբնիկության հարցի կապակցությամբ տարբեր կարծիքներ են հայտնել։ Խնդրին առաջինը անդրադարձել է Ս. Ջալալյանցը, նշելով՝ «Այսոքիկ գյուղորայք հին են, և բնակիչքն բնիկ շամախեցիք...»[19]։ Ա. Բարխուտարյանցը գրում է. «Բնակչաց մի մասն նախ Արցախի Խաչեն և Ջրաբերդ գավառներից գաղթած են Կախեթի կողմերն և ապա Կախեթից գյուղս, վասն որո անվանված է Կուրջիվան։ Եվ մյուս մասն գաղթած է Դիզակ գավառի Հատրութ և Դող գյուղերից և Վարանդա գավառի Հիրհեր, Ղուղի-Ճարտար և Կյունի-Ճարտար գյուղերից։ Իսկ ամենափոքր մասն եղած է բնիկ տեղացի»[20]։ Մ. Սմբատյանցը ուղղակի դրում է. «Գյուրջիվանցիք և Գյուրջիլարցիք գաղթած են Վրաստանից 1820.»[21]։

Ակնհայտ է, որ 1850-ական թվականներին գյուղ այցելած Ս. Ջալալյանցը չէր կարող ընդամենը 30 տարի առաջ գյուղում հաստատված բնակչությանը բնիկ համարել։ Ավելի հավանական է, որ Մ. Բարխուտարյանցին և Մ. Սմբատյանին այդպիսի ենթադրության համար հիմք է ծառայել գյուղի՝ Գյուրջևան (գյուրջի-վրացի, Գյուրջիստան-Վրաստան) անվանումը։ Մյուս կողմից, գյուղում պահպանված հայկական հուշարձանները դարերի խորքն են գնում, և այդպիսով վերահաստատվում է Ս. Ջալալյանցի վկայությունը։ Ինչ վերաբերում է Արցախի Վարանդա և Դիզակ գավառների նշված մի քանի գյուղերից արտագաղթած և տեղում հաստատված հայ բնակչությանը, ապա այդպիսի համալրում ստացել են նաև երկրամասի շատ այլ հայկական գյուղեր, և այստեղ էլ այն նկատելի է իբրև փոքրամասնություն։ Ինչևէ, շատ հարցերի պատասխանները ստանում ենք գյուղում պահպանված հուշարձանների և մանավանդ վիմագրերի ուսումնասիրության շնորհիվ։

Գյուրջևանի պատմաճարտարապետական արժեքավոր հուշարձաններից էր եկեղեցին (այժմ քանդված է)։ Ամենայն հավանականությամբ այստեղ եկեղեցի եղել է դեռևս շատ հնում, սակայն բազմիցս ենթարկվել է նորոգումների։ Հայտնի է, որ 1633 թ. գյուղում կառուցվել է եկեղեցի։ Դրանից

---

18 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 99։ Ծխերի քանակին վերաբերող առաջին վկայություններից մեկի հեղինակն է Ս. Ջալալյանցը, սակայն նա Հնդար և Գյուրջևան գյուղերի բնակչությունը միասին է նշում, այն է՝ 180 տուն (Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի մեջն Հայաստան, Ն. Բ, Տփխիս, 1858, էջ 393), և հնարավոր չէ պարզել, թե դրանցից յուրաքանչյուրը քանի տուն ուներ։ 1876 թ. Գյուրջևանն ուներ 160 տուն (ՀՊԿՊԱ, գ. 6245, թ. 7), 1903-ին՝ 300 (ՀՊԿՊԱ, գ. 10093, թ. 1,9)։

19 Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 394։ Ս. Ջալալյանցը նկատի ունի նաև Հնդար գյուղի բնակչությունը։

20 Մ. Բարխուտարյանց, Աղվանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 180։

21 Մ. Սմբատյան, նշվ. աշխ., էջ 149։

միայն շինարարական արձանագրությամբ քարն էր պահպանվել, ագուցված նոր եկեղեցու ներսում, հարավային ավանդատան մուտքի ճակատին. ՇԻՆԵՑԱՒ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ... ՀՐԱՄԱՆԱՒ ԹՈՄԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ՀԱՅՈՑ ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ Ի ԹՎԻՆ ՌՁԲ (1633)[22]։ 1821 թ. Գյուրջևանում հիշվում էր ս. Աստվածածին եկեղեցին[23], իսկ 1836 թ. արդեն, հին եկեղեցու տեղում կառուցվել է նոր եկեղեցի և օծվել ս. Գրիգորիսի անվամբ։ Այդ առթիվ արտաքուստ եկեղեցու հարավային մուտքի դռնագլխին փորագրված է եղել. Ի ԹՎԻՆ ՀԱՅՈՑ ՌՄՁԵ (1836) ԱՄԻ ՇԻՆԵՑԱՒ Ի ԿԻՐՔՎԱՆՈՒ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ Ի ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎՐԴՈՑ, ԳՐՈՂՍ ԵՄ ՏԷՐ ՍԱՐԳԻՍ ՏԷՐ ՕՀԱՆԵԱՆ[24]։ Ներկայումս հիմնահատակ ավերված եկեղեցուց ցավոք չեն մնացել նաև վերոհիշյալ արձանագիր արժեքավոր քարերը։ 1865 թ. Շամախու թեմի առաջնորդ Դանիել արքեպիսկոպոսը կարգադրություն էր արել Գյուրջևանի եկեղեցին պարսպապատելու և ղրան կից ուսումնարան կառուցելու մասին[25]։ 1866 թ. դրությամբ խիստ քայքայված էր եկեղեցու տանիքը, որով և նախապատրաստվում էին նորոգման աշխատանքներ. «Ի կոնսիստորեիս հայսմիկ լուան զհայտարարություն երեցփոխանի սբ. Աստվածածնի եկեղեցվույն Գյուրջիվան գեղջ ընդ ստորագրությամբ քանի մի երևելի ժողովրդականաց տեղվո 2-ն այսր մայիսի (1866 թ.—Ս. Կ.), որով հայտնին սմին թէ որովհետև խեցեղինոք (քյունք) ծածկյալ տանիք եկեղեցվո յուրեանց ի պատճառ կարի հնության խարխալյալ վնասավորյալ է իսպառ հորմե և ջուրք ձյան և անձրևա միանգամայն թափանցին ի ներքս եկեղեցվո և եթե ոչ վերանորոգեսցի օր առաջ ունի հապայն վնասիլ և մեծագումար ծախսուց պետս ունիլ...»[26]։ Այդ աշխատանքները կատարելու համար էջմիածնի սինոդից խնդրվում էր թույլ տալ իրենց եկեղեցու գումարներից 150 ռուբլի ծախսել։ Թույլտվությունը ստանում են, սակայն դեռ աշխատանքները չկատարած, արդեն 1872 թ. գյուրջևանցիները երկար մտածելուց հետո նորից են խնդրագրով դիմում էջմիածնի սինոդին. «...բայց որովհետև մենք հետևնկատեցինք, որ քյունկը շատ շուտով փշրվում է և կարճ ժամանակի մեջ ոչնչանում... ուստի խորհրդածյալ 2 հմուտ վարպետաց բարվոք համարեցինք ամրության և ապահով պահպանության համար ծածկել եկեղեցվո տանիքը տախտակյա ծածկութիվ (թախթափուշ)...»[27]։ Այդ նորոգությունը իրականացնելու համար սինոդից խնդրում էին թույլ տալ եկեղեցու դումարներից ծախսել 400 ռուբլի։ Այս խնդրանքը ևս բավարարվում է։ Ուշագրավ է, որ վերը նշված փաստաթղթերում եկեղեցին կրկին հիշված է ս. Աստվածածին անունով։ Արդեն 1903 թ. կրկին պահանջ էր դգացվում վերանորոգումների, ըստ որում նախատեսվում էր «...նորոգել զայն եկեղեցի ի հիմանե քարուկրով հաստատուն եղանակավ և ծածկել զտանիս թիթեղոք...»[28]։ Աշխատանքների իրականացումը պահանջում էր 1800 ռուբլու ծախս։

Ինչպես վերևում տեսանք, Գյուրջևանում եկեղեցական-ծխական դպրոցի բացման մասին դեռևս 1865 թ. կարգադրություն էր արել թեմական առաջնորդ Դանիել արքեպիսկոպոսը։ Սակայն, ըստ երևույթին, այդ գործը կյանքի չի կոչվել, քանի որ դպրոցի գոյության մասին հետագա տարիների վավերագրերում ոչ մի տեղեկության չենք հանդիպում։ Հայտնի է, որ եկեղեցուն կից 1887 թ. բացվել էր կառավարչական (ռուսական) դպրոց[29]։ Ավելի ուշ՝

---

22 Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 181։

23 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3426, թ. 35։

24 Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 181։ Արձանագրությունը գրի է առել նաև Փաշերունին՝ փոքր ինչ տարբերվող (ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 41)։

25 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4368, թ. 20։

26 ՀՊԿՊԱ, գ. 4819, թ. 1, 8։

27 Նույն տեղում։

28 ՀՊԿՊԱ, 1, գ. 10078, թ. 1։

29 ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 41։

1914 թ. գյուղում բացվել էր եկեղեցական-ծխական օրիորդաց դպրոց, որը տարեկան 300 ռ. նպաստ էր ստանում Բաքվի Հայոց մարդասիրական ընկերության կողմից։ Նույն՝ 1914 թ., դպրոցում սովորում էին 25 աղջիկ[30]։ 1915—16 թթ. ուստարվա սկզբին դպրոց էին հաճախում 16 աղջիկ[31], իսկ նույն թվականի հոկտեմբեր ամսին՝ 30 աշակերտուհի[32]։ Հայտնի է, որ 1916—17 թթ. ուստարում օրիորդաց դպրոցն ուներ 33 սանուհի[33]։

Գյուրջևանի պատմական հուշարձաններից առանձնակի կարևորություն ունի գերեզմանոցը, որը տարածվում է գյուղի հյուսիսային մասում։ Այստեղ պահպանվել են բազմաթիվ անտաշ սալաքարեր։ Կան նաև կոփածո հնաոճ տապանաքարեր առանց արձանագրության։ Մեր գտած ամենահին գերեզմանաքարը 1762 թվականի է.

ԱՅՍ Է ՏԱՊ(Ա)Ն ՔՕԽԱՅ ԱԶԸՐԵ|Ի ՈՐԴԻ ԿԱՓԵԼ, ԹՈՒՌՍ ՇԱ|ՅԲՈՏԱՂ, ԻԻՐ ՓԵՍԱ ՅԱԿՈՒՓ|Ս ԳԷՐԻՐ ԴՎԱ, Ի ԹՎԻՆ ՌՄԺԱ (1762) (նկ. 1)։



Նկ. 1. Տապանաքար Գյուրջևան գյուղի գերեզմանոցում։

Սրան կից ուղղանկյունաձև մեկ այլ տապանաքարի հարավակողմին քառատող փորագրություն է։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱԶԸՐԻ ՈՐԴԻ | ՍԱՐԿԱՅՎԱՔ ԵՂԻԵԱՅԶԱՐ, | ԻԻՐ ԿՈՂԱԿԻՑ ՍԱՆԱՄ, ԹՎ(ԻՆ) Ռ|ՄՃԼԸ (1789)։

Ուշագրավ են նաև հետևյալ տապանագրերը.

30 ՀՊԿՊԱ, ֆ. 27, ց. 1, գ. 318, թ. 55։ Հայտնի է, որ դպրոցի բացման առթիվ, 1914 թ. սեպտեմբերի 14-ին գյուղի տանուտեր Գրիգոր Մովսիսյանցի և 165 համագյուղացիների մասնակցությամբ ժողով է գումարվել, որն էլ որոշել է անհապաղ բանալ օրիորդաց դպրոցը (ՀՊԿՊԱ, գ. 233, թ. 2), տե՛ս նաև Ս. Կ. Խուդոյան, Արևելահայ դպրոցները 1830—1920 թվականներին, Երևան, 1987, էջ 450)։

31 ՀՊԿՊԱ, ֆ. 27, ց. 1, գ. 318, թ. 79—81։

32 Նույն տեղում։

33 ՀՊԿՊԱ, գ. 36, թ. 31։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՃԱՆՇԻ ՈՐԴԻ | ԱԹԱՊԱԿ ՔՈՎԽԻ, Թվ(ին) ՌՄՃԽԴ (1795)։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՇԱՄ(Ա)ԽԻ Պ|ՆԱԿԵ(Ա)Լ ՕՍՄԱՆՑԻ ԱԻԱՔԻ ՈՐԴԻ ԱՂ|Ա-ՃԱՆ, Թվ(ին) ՌՄԽԴ (1795)։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱԼԱ|ՅՎԵՐՏԻ ՈՐԴԻ ԳՐԻ|ԳՈՐԻՆ, Թվ(ի)ն ՌՄՃ (1801)։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՇԱՄԱԽԵՑԻ ԱԻԱՔԻ ԴՈՒՍ|ՏՐ ԱՆԱ ԽԱՆՈՒՄԻՆ, Թ(վին) ՌՄՃԷ (1808)։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Տ(Է)Ր ԱԲՐ(Ա)ՀԱՄ(ԻՆ), Թ(վին) ՌՄՃԸ (1809)։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՇԱՄԱԽԵՑԻ ՄԻՐՋԻ ՈՐԴԻ ԱՎԱԳԻՆ, Թ(վին) ՌՄԿԱ (1812)։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՊԵՏՐՈՍԻ ՈՐԴԻ ԲՐՈՒԴ| ԱԲՐ(Ա)ՀԱՄԻՆ, ՈՐ ՓՈԽԵՑԱՎ Ի ՄԱՀՎԱՆԷ | Ի ԿԵԱՆԸՍ, Տ(Է)Ր ՀԱՆԳՈՒՍՑԷ ԱՄԷՆ, Թ(վին) ՌՄՀԴ (1825)։

Ի դեպ, բրուտագործությունը այն արհեստներից մեկն էր, որի լավագույն արտադրանքով Գյուրջևանը հայտնի էր ողջ երկրամասում։ Ժամանակակիցները նշել են, որ. «Բրտության արվեստն այնքան ծաղկած է, որ կարասներ և խեցեղեն անոթներ է մատակարարում ամբողջ Բագվա նահանգին»[34]։ Հետաքրքրական է նաև Քաջբերունու վկայությունը. «Մի զբաղմունք ևս ունին գյուրջևանցիք, որ խիստ ջոկում է նրանց՝ ուրիշ հայ գյուղերից։ Այդ կատարելագործված բրուտագործությունն է։ Գյուրջևանցիք ունեն կավե ամաններ շինելու համար մինչև 15 փութ և ավելի։ Բոլոր բազմաթիվ հայ գյուղերի այգիների համար միայն նրանք են պատրաստում գինու միանման կարասներ, որ ծախվում է ամբողջ գավառում։ Գյուրջևանի կավե ամանները այնքան ամուր են և բարակ, որ զանգի պես ձայն են հանում։ Իրենց կավը վերցնում են եկեղեցուց քիչ ցած Իշկուն անունով տեղից»[35]։

Ինչևէ, վերոհիշյալ տապանագրի շնորհիվ իմացվում է նաև Գյուրջևանի հռչակված բրուտագործ վարպետներից մեկի անունը (Աբրահամ), ապա նաև, որ այդ արհեստով գյուղում զբաղվում էին առնվազն XVIII դ. վերջից, XIX դ. սկզբներից (մեջբերված գրավոր հիշատակությունները վերաբերում էին XIX դ. վերջին և XX դ. սկզբներին)։

Ուշագրավ է նաև Գյուրջևանի հոգևոր հովիվ Հովհան Փիրվերտյանցի տապանագիրը.

ԱՅՍ ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ Է Տ(Է)Ր|ՅՕՀԱՆ ՔԱՀԱՆԱՅԻ ՓԻՐՎԵՐՏԵԱՆՑ[36],| ՈՐ ՅՐՆԹԱՅՍ 80 ԱՄԵԱՅ ՀԱՍԱԿԻ|ՍՐԲԱԿԱՅ և ՀԱՄԵՍՏԱԿԵՆՑԱՂ ԲՐ|ՆԱԻՈ-ՐՈՒԹԵԱՄԲ ՀԱՆԳԵԱԻ | Ի ՏԷՐ, Ի 13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1866 ԱՄԻ, | ԱՋԳԱԿԱՆ՝ ՌՅԺԵ։

Սրա կողքին, մեկ այլ տապանաքարին փորագրված է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏԷՐ ՕՀԱՆԻ|ԿՈՂԱԿԻՑ ԱՆՆԱԻՆ, Թ(վին) ՌՄՁԵ (1836)։

Գերեզմանոցում, ուր այժմ էլ թաղումները շարունակվում են, բազմաթիվ են XVIII—XIX դդ. վերաբերող տապանագրերը։ Դրանց մեծ մասն արդեն ծածկված է մացառներով.

Գյուրջևանի հարավ-արևելյան կողմում, շուրջ 1,5 կմ հեռու, Սայադ լեռան հյուսիսային կողմում, Գյուրջևան-Աղսու խճուղու աջ եզրին պահպանվում է 1908 թ. կառուցված աղբյուրի հոյակերտ համալիրը։ Ճակատի սրբատաշ քարերից մեկի վրա փորագրված է շինարարական արձանագրությունը.

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1908 ՇԻՆԵՑԱԻ ԱՂԲԻՒՐՍ ՕԱՅՍ|ԾԱԽԻՔ ԳԻՒՐՋԻԱՆՑԻ ՄԱՐՏԻՐՈՍ ՎԼԱՍԵԱՆՑԻ։

---

34 Մ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 180—181։

35 ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 40։

36 Օհան Փիրվերտյանցը ծնվել է 1786 թ.։ Գյուրջևան գյուղում քահանայագործության կոչումով վավերագրերում հիշատակվում է սկսած 1838 թ. (ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3426, թ. 31)։ Հովվում էր նաև Հարևան Քոշլուճ գյուղին։ Երբեմն նաև՝ Ջարգարանին։

Արձանագրության առավել համառոտ բովանդակությունը փորագրված է նաև ռուսերեն և արաբատառ թուրքերեն լեզուներով։ Հուշարձանը հայտնի է «Ղադրության աղբյուր» անվամբ։

Նկ. 2. Գյուրջևան գյուղի մոտ գտնվող «Ղադրության աղբյուրը»։

Հնդար։ Գյուղը գտնվում է Գյուրջևանից 2,5 կմ արևմուտք, Գյուրջևան–Գյուրդաշեն տանող ճանապարհի մեջտեղում։ Այն բաղկացած է երեք թաղամասերից (վերին, ներքին, միջին)։ Հնդարի վերաբերյալ մատենագրական տվյալներ գրեթե չեն պահպանվել։ Հավանաբար, XVII—XVIII դդ. վերաբերող մի հիշատակություն արձանագրել է Մ. Բարխուտարյանցը, որը Խրխափոր գյուղի եկեղեցում պահվող ավետարանում կարդացել է հետևյալը. «Ստացող սուրբ ավետարանիս Շիրվանա հինդարցի Մելքումն և եղբարք Ապրիսն, Փիրպուտաղն»[37]։

1853 թ. գյուղն ուներ 83 տուն[38], իսկ 1886 թ.՝ 95 տուն հայ բնակչություն[39]։ 1902 թ. գյուղում կար 106 տուն[40]։ Երկրամասի հայկական շատ այլ գյուղերի պես Հնդարը ևս մեծ կորուստներ է տվել 1918—1920 թթ.։

Ուսումնասիրողները նշել են, որ հնդարեցիք Շիրվան երկրի բնիկներն են[41]։ Մ. Բարխուտարյանցը, ավելի խորանալով հարցի մեջ նշում է. «Բնիկ են ստորին և միջին թաղերի բնակիչներն, իսկ Լփնաց կողմից գաղթած է Վերին թաղի ժողովուրդն...»[42]։ Թաղամասերից յուրաքանչյուրն ունի իր գերեզմանոցը (այդպես է եղել նաև հնում)։ Դրանց միջև մի հաստաբուն դարավոր կաղնի ծառի մոտ գտնվում էր ս. Աստվածածին եկեղեցին (այժմ՝ ա-

37 Մ. Բարխուտարյանց, Արցախ. Բաքու, 1895, էջ 244։
38 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 100։
39 ՀՊԿՊԱ, գ. 8162, թ. 3։
40 ՀՊԿՊԱ, գ. 10094, թ. 1։
41 Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 394, Մ. Սմբատյան, նշվ. աշխ., էջ 140։
42 Մ. Բարխուտարյանց, Աղվանից երկիր և գրացիք, էջ 181։

վերակ)։ Սրա դինարարական արձանագրությունը բարեբախտաբար ժամանակին գրի է առել Մ. Բարխուտարյանցը, ԿԻՐԿԻՆ ԲԷԿ ԱՐՇԱՌԵԱՆՑ[43]. 1844 ԱՄԻ ՅՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԿԱՌՈՒՑԱԻ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐՍ ԱՅՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՒՀԻՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՑ Ի ՅԻՇԱՏԱԿ ՍՈՅՆ ՀՆՂԱՐ ԳԵՂՋ ՀԱՅՈՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ՝ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ՆՈՅԻՆ, ՄԱՆԱՒԱՆԴ ՄԵԾԱԻ ՋԱՆԻՒՔ ԵՒ ԱՐԴԵԱՄԲՔ ԳԼԽԱՒՈՐԱՑՆ[44], Հայտնի է, որ 1858 թ. եկեղեցին ուներ մի շարք վնասված ու քայքայված տեղեր, որի կապակցությամբ նախատեսվում էին նորոգչական աշխատանքներ[45]։ 1862 թ. Շամախու հայոց հոգևոր կառավարությունը՝ կոնսիստորիան, էջմիածնի սինոդին զեկուցել էր այդ աշխատանքների բարեհաջող կատարման ու ավարտի մասին[46]։ 1870 թ. Հնդար գյուղի հասարակությունը դարձյալ դիմել էր հոգևոր կառավարությանը՝ եկեղեցու տանիքը նորոգելու թույլտվություն ստանալու համար[47]։ Նախատեսվում էր տանիքը պատել տախտակյա ծածկույթով։ Նույն թվին ստացվել էր նորոգման թույլտվությունը[48]։ 1880-ական թվականների վերջերին, Մ. Բարխուտարյանցի այցելության ժամանակ, եկեղեցին «...վտանգավոր կերպիվ շարժից վնասված է»[49]։ Մ. Սմբատյանը նշում է, որ ինքը 1893 թ. հոկտեմբերին օծել է գյուղի նորաշեն սրբատաշ քարերով շինված եկեղեցին[50]։ Դրանից կարելի է եզրակացնել, որ 1890-ական թվականներին ս. Աստվածածին եկեղեցին հիմնովին նորոգվել է։ Եկեղեցին այժմ գոյություն չունի, նրա տեղում միայն մի փոս է նկատվում։ Ավերակի մոտ (հնում՝ եկեղեցու բակում) պահպանվում են մի քանի շիրմաքարեր, որոնք պատկանում են Հնդարի ծխատեր քահանաներին ու սրանց ընտանիքի անդամներին։ Ահա դրանք.

ՅԻՇԱՏԱԿ Է ԱՅՍ ՏԱՊԱՆՍ ՀԸՆՂԱՐԵՑԻ | ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ ՅՕՀԱՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆՑԻ ԱՆՈՒԱՆԵՑԻ, | ԹՎԻՆ ՌԲՃ (1751), ԱՄԷՆ[51]։

ԵՍ ԵՄ ՀՈՂԱՊԱՏԵԱՆ ՇԻՐԻՄ Ե | ՏԱՄԲԱՐԱՆԻ ՆՈՐՇԻՆՈՒ ԳԱԼՈՒՍՏԻ| ԿԵՆԱԿԻՑ ԲՈՐՋԱԿ Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)ԾԱՏՈՒՐԵՆ|ԸՆԹԵՐՑՈՂԱՅԴ ՀԱՅՑԵՄ ԴԱԼ ՈՂՈՐՄԻ, ԹՎ(ԻՆ) ՌՄԼԵ (1786)[52]։

Ի ՆԵՐՔՈՅ ՏԱՊԱՆԵՍ ԱՅՍ | ՀԱՆԳԵԱՎ ԱՌԱՔԵԼ Ք(Ա)Հ(Ա)Ն(Ա)Յ ՏԷՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ[53] | 66 ԱՄՈՔ ԻՒՐՈՎ 1894 Թ. Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ։

Ի ՆԵՐՔՈՅ ՏԱՊԱՆԵՍ ԱՅՍ | ՀԱՆԳԵԱՎ ԱՌԱՔԵԼ Ք(Ա)Հ(Ա)Ն(Ա)Յ | ՏԷՐ ՇԱՀՐԱԶ ՏԷՐ ՄԱՐՏԻՐՈՍ|ԵԱՆՑ, 1890 Թ. 50 ԱՄՈՔ ԻՒՐՈՎ|ՀՆՂԱՐ ԳԻՒՂ, Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ։

Հնդար գյուղի բոլոր երեք թաղերի գերեզմանոցներն էլ խիստ հետաքրքիր են։ Սակայն դրանց մեջ առաջին հերթին առանձնանում է միջին թաղի գերեզմանոցը, ուր բազմաթիվ հին տապանաքարերից զատ պահպանվել են նաև երկու խաչքարեր։ Վերջիններից մեկն ունի անթվակիր արձանա-

---

43 Հայտնի է, որ նույն՝ 1844 թ., Գրիգոր-բեկ Ավշաոյանցը դիմել էր հոգևոր կառավարությանը՝ իր որդուն՝ Բաղդասարին Հնդարի քահանա ձեռնադրելու խնդրանքով, նշելով, որ քահանա չունենալու պատճառով հաճախ դիմում են հեռավոր Ղալակա գյուղ կամ Շամախի քաղաք (ՀՊԿՊԱ, ֆ. 36, ց. 1, գ. 1585, թ. 1)։

44 Մ. Բարխուտարյանց, Աղվանից երկիր և դրացիք, էջ 132։

45 ՀՊԿՊԱ, ֆ. 36, ց. 1, գ. 3684, թ. 1։

46 ՀՊԿՊԱ, թ. 18։

47 ՀՊԿՊԱ, դ. 5344. թ. 1։

48 ՀՊԿՊԱ, թ. 2։

49 Մ. Բարխուտարյանց, Աղվանից երկիր և դրացիք, էջ 132։

50 Մ. Սմբատյան, նշվ. աշխ., էջ 360։

51 ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 51։ Գրի է առնված բազմաթիվ վրիպումներով։

52 Նույն տեղում։ Բաց են թողնված վերջին երկու տողերը։ Ունի նաև այլ վրիպումներ։

53 Առաքել Տեր-Մարտիրոսյանցի մասին, իբրև Հնդարի քահանա, վավերագրերում հիշատակություն կա 1890 թվից (ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3162, թ. 3)։ Հայտնի է նաև, որ գյուղը 1886 թ. քահանա չուներ, ուրեմն Առաքելը Հնդարի հոգևոր հովիվ է կարգվել 1886—1890 թթ. միջակայքում (ՀՊԿՊԱ, դ. 9287, թ. 9—10)։

գրություն։ Ըստ ոճական, գեղարվեստական, գրչության առանձնահատկությունների, ինչպես նաև ուրիշ հնավայրերում պահպանված համանման խաչքարերի համեմատական ուսումնասիրության, այն կարելի է թվագրել XV—XVI դդ.՝

Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐ|ՄԻ ՄՈՒՍՓԱՅ|ԻՆ։

Ուշագրավ են նաև գերեզմանոցի տապանագրերը, որոնցից հները վերաբերում են XVIII դ. սկզբներին և փորագրված են ուղղանկյունաձև տապանաքարերի հարավահայաց երեսներին։

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ Տ(Է)Ր | Ա(Ա)Հ(Ա)ԿԻ, ԹՎ(Ի)Ն ՌՃԵԱ (1702)։

ԱՅՍ Է Հ(Ա)ՆԳԻՍՏ Տ(Է)Ր ԱԲՐ(Ա)Հ(Ա)ՄԻ ԴՈՒՍ|ՏՐ ՆԱՐԻՆԻՆ, ՌՃԵԱ (1702)։

ԱՅՍ Է Հ(ԱՆ)Դ(Ի)ՍՏ Տ(Է)Ր Ս(Ա)Հ(Ա)ԿԻ ՈՐԴԻ Տ(Է)Ր ԱԲՐ(Ա)Հ(Ա)ՄԻ, | ԹՎ(Ի)Ն ՈՃԵԲ (1703)։ | Տ(Է)Ր ԱԲՐ(Ա)Հ(Ա)ՄԻ ԿՈՂԱԿԻՑ Շ(Ա)ՀՍՈՒԼԹԱՆ ԱՅՍ Ե(5)ՔԱ|ՐՍ ՇԻՆԵՑԻ, ԵՌ(5000) ԴԻԱՆ ԽԱՐՋ ԱՐԻ։

ԱՅՍ Է Հ(ԱՆ)Դ(ԻՍ)Տ Տ(Է)Ր ԱԲՐ(Ա)Հ(Ա)ՄԻ ՈՐԴԻ ԲԱՐ|ԻԽԱԻՍԻՆ, ՌՃԵԴ (1701)։

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ...

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԲԱՐԷ|ՊԱՇՏ ՇՐՎԱՆԻՍ, ՈՐ ԿԷՍ|ԱԻՐԷ Ք(ՐԻՍՏՈ)Ս ՓՈԽԵՑԱԻ, ՈՎ ԿԱՐԴ(ԷՔ) | ԱՂԱԻԹ|Ս ԻՇԵՑԷՔ, | ԹՎԱ|ԿԱՆԸ| ՃՂԹ (1750)[54]։

Խիստ ուշագրավ են Հնդարի ներքին թաղի գերեզմանոցում պահպանված տապանաքարերը։ Դրանցում կան XIV—XVI դդ. ընորոշ կենցաղային պատկերաքանդակներով գերեզմանաքարեր։ Արձանագիրներից հները վերաբերում են XVIII դ. սկզբներին։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՐՋԻՄԱՆԻ|Ն, ԹՎ(ԻՆ) ՌՃԿԶ (1717)։

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԽԹԻԱՐԱՅ, ՈՐ ԿԷՍԱԻ|ՐԷ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս ՓՈԽԵՑԱԻ, ՈՎ ԿԱՐԴԷՔ ԱՂ|ԼԱԻ]ԹՍ| ՅԻՇԵՑ|ԷՔ։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԸՍՏԵՓԱՆ | ՔՕԽԻ ԿՈՂԱԿԻՑ ԱՆԹԱՌԱ|ՆԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄԽ (1791)։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԸՍՏԵՓԱՆ | ՔՕԽԻ ՈՐԴԻ ԻՍՐԱԷԼԻՆ | ԹՎ(ԻՆ) ՌՄԽԸ (1799)։

ՅԻՇԱՏԱԿ Է ՏԱՊԱՆՍ ՀԸՆՂԱՐԵՑԻ ԶԱՐԿԵԱՐ | ՍՏԵՓԱՆԻ[55] ՈՐԴԻ ՅԱՐՈՒԹԻՆԻՆ ԹՎ(ԻՆ) ՌՄՀԱ (1822)։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԼՔՈՒՄԻ ԿՈՂԱԿ | ԻՑ ՄԻՔԱՅԷԼԻ ԴՈՒՍՏՐ ԱՆԱ | ԽԱՆՈՒՄԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄՀԴ (1825)։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՇԱՄԱԽԵՑԻ | ՍԱՐՔԻՍԻ ԿՈՂԱԳԻՑ ՀԸՌԸՄ | ՍԻՐԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄՀԶ (1827)։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆՍ ՄԱՐԻԱՄԱ | ԿԻՆ ՄԻՔԱՅԷԼ ՄԵԾ ԻՇԽԱՆԻ, ԹՎ(ԻՆ) ՌՄՁԵ (1836)։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՂԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԻՆ | ԱՂԱ ՄԻՔԱԷԼԵԱՆ ԱԽՇԱՐՈՎԻՆ | Ի ԲՆԱԿԻՁ ՀՆՂԱՐ ԳԻՒՂԻՆ, ՓՈԽԵԱԼ | ԱՌ ՓՐԿ(Ի)Ձ ՅԻՍՈՒՍԻՆ 1837 ԹՈՒԱԿԱՆԻՆ։

Վերին թաղի գերեզմանոցում հին տապանաքարեր չգտանք։ Միայն մեկը, որ վերաբերում էր XVIII դ. վերջին, ուներ հետևյալ տապանագիրը.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՐԹՈՒՆԻ ՈՐԴԻ ՕՎԱՆԷՍԻՆ, ԹՎ(ԻՆ) ՌՄԽԸ (1799)։

Հնդար գյուղի երեք գերեզմանոցներում էլ (չհաշված եկեղեցու մոտինը) բազմաթիվ են XIX դարին վերաբերող արձանագիր գերեզմանաքարերը։ Կան նաև հին, սրբատաշ, սակայն անարձանագիր մեծաթիվ տապանաքարեր։

---

54 Ակնհայտ է, որ գրիչը բաց է թողել հազարավորը՝ Ռ-ն։ Պետք է լիներ ՌՃՂԹ (1750)։

55 Սրա հիշատակին Հնդար գյուղի ներքին թաղում աղբյուր է շինվել։ Աղբյուրի արձանագրությունը կներկայացնենք համապատասխան տեղում։

Դեռևս 1874 թ. Հնդար գյուղում գործում էր մասնավոր կրթարան՝ 1 ուսուցչով և 23 աշակերտով[56], սակայն այն, հավանաբար, իր գոյությունը երկար չի շարունակել, քանի որ ոչ ավելի հին և ոչ էլ ավելի նոր համապատասխան վավերագրերում այլևս չի հիշատակվում։ Հայտնի է, որ 1890 թ. ծրագրվում էր գյուղի եկեղեցուն կից շինել դպրոց[57]։ Մեկ այլ վավերագիր հաղորդում է, որ 1893 թ. Հնդարում հիմնադրվել է դպրոց[58]։ Գյուղն անձամբ այցելած ու եկեղեցու մոտ տեղի ունեցած դպրոցական ժողովին (1895 թ., հուլիսի 30) մասնակցած Քաջբերունին հաղորդում է, որ Հնդարեցիք դեռ նոր էին ծրագրում դպրոց հիմնել[59]։ Նույն՝ 1895 թ., Հնդարում հաշվվում է բաց անել եկեղեցական ծխական դպրոց, որը, սակայն, կառավարության հրամանով շուտով փակվում է Անդրկովկասի հարյուրավոր հայկական այլ դպրոցների նման[60]։ Շուրջ 12 տարի փակ մնալուց հետո Հնդարում նույն դպրոցը վերաբացվում է 1908 թ.[61]։ 1912 թ. դպրոցը միդասյա էր, հոսանյա։ Ուներ 39 աշակերտ (3-ը՝ աղջիկ), 1 ուսուցիչ[62]։ 1914—1915 ուստարում դպրոցի շենքը բաղկացած էր մեկ սենյակից, ուներ 1 ուսուցիչ[63]։ 1915—1916 ուստարում ուներ մինչև 20 աշակերտ (ուստարվա սկզբին՝ 16 աշակերտ)[64]։ 1916—1917 ուստարում Հնդարի դպրոցում սովորել են 31 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկներ[65]։ Ներկայումս դպրոցն ութամյա է, սակայն աշակերտների սակավաթվության պատճառով՝ փակման ենթակա։

Հնդարում ուշագրավ հուշարձաններ են աղբյուրները, որոնցից ներքին թաղի և գերեզմանատան մոտի «Նաբալի» կոչված աղբյուրների արձանագրությունները ժամանակին ընդօրինակել է Քաջբերունին։ Դրանք են. ՅԻՇԱՏԱԿ Է ԱՂԲԻՒՐՍ ԶԱՐԿԱՐ ՍՏԵՓԱՆԻՆ, ԹՈՒՄԱՆԻ ՈՐԴԻ ՊՕՂՈՍԻՆ[66] և մյուսը՝ ՅԻՇԱՏԱԿ Է ԱՂԲԻՒՐՍ ՇԱՄԱԽՈՒԱՅ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ ԵՒ ԿՆՈՋՆ... 1846 ԹՒ[67],

Գյուրդաշեն (Գյուրդա)։ Գավառի հինավուրց հայկական գյուղերից մեկն էր։ Գտնվում է Հնդարից 3 կմ հյուսիս-արևմուտք, գեղատեսիլ վայրում, Գարդման (այժմ՝ Գիրդիմանչայ) գետի ձախ կողմում։ Ենթադրելի է, որ գյուղի հին անվանաձևը եղել է Գարդման՝ համանուն գետի և գավառի անունով ու ժամանակի ընթացքում աղավաղվելով մեզ հասել Գիրդա կամ Գյուրդա ձևով։ 1858 թ. գյուղն ուներ 14[68], իսկ 1902 թ.՝ 31 տուն[69] միայն հայ բնակչություն։

Գյուրդաշենի խոր հնության վկայությունն են գերեզմանոցում (ծածկված՝ խիտ անտառով) պահպանված բազմաթիվ հնամենի տապանաքարերը։ Դրանցում կան կենցաղային թեմաներով քանդակներ ու արձանագրություններ ունեցող գերեզմանաքարեր։ Վերջիններից միայն մեկի վիմագիրը հնարավոր եղավ վերծանել (տեղում պահպանված ևս երկու արձանագրություն խիստ հողմահարված էին)։

ԹՎ(ԻՆ) ՋՂԶ (1547) | ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏՆ ԱՂ | ԱՅ Պ(Ա)ՅԱ(Ն)ՏԻՐ ՊԱՇԽ (նկ. 3)։

---

56 Ս. Կ. Խուդոյան, նշվ. աշխ., էջ 453։
57 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8865, թ. 8։
58 ՀՊԿՊԱ, ց. 3, գ. 572, թ. 6։
59 ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 45։
60 Ս. Կ. Խուդոյան, նշվ. աշխ., էջ 453։
61 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 572, թ. 6։
62 ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 13։
63 ՀՊԿՊԱ, ֆ. 27, ց. 1, գ. 318, թ. 26—27։
64 ՀՊԿՊԱ, թ. 79։
65 ՀՊԿՊԱ, գ. 36, թ. 31։
66 ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 51։
67 ՀՊԿՊԱ, թ. 52։
68 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3684, թ. 13։
69 ՀՊԿՊԱ, գ. 10094, թ. 1։

Սկատելի է, որ գերեզմանոցում կան շատ ավելի հին տապանաքարեր, սակայն առանց արձանագրության։ Ակնհայտ է նաև, որ դարերի ընթացքում այս գերեզմանոցում թաղումները չեն ընդհատվել և շարունակվում են ցայսօր՝ լլրի ստորին մասում։ Այս առումով կարևոր է նաև Մ. Բարխուտարյանցի այն հիշատակությունը, թե Գյուրդա գյուղի «ժողովուրդն բնիկ» են[70]։



Նկ. 3. Տապանաքար Գյուրդա գյուղի գերեզմանոցում։

Հայտնի է, որ 1858 թ. գյուղի հասարակությունը սեփական եկեղեցի կառուցելու թույլտվություն ստանալու խնդրանքով դիմել էր հոգևոր կառավարությանը։ Նախատեսում էին շինել մի եկեղեցի, որը պիտի ունենար «13 շահի գազ» երկարություն և «9 գազ» լայնություն[71]։ Նույն թվականին գյուրդացիները ստացել էին սեփական միջոցներով եկեղեցի կառուցելու թույլտվություն[72]։ Դեռևս 1890-ական թվականներին գյուղում հիշվում է կիսավարտ եկեղեցու շենք, որի հիմնադրումը՝ սկսված շուրջ 30 տարի առաջ, ինչ-ինչ հանգամանքների բերումով թերի էր մնացել[73]։ Մեր այցելության ժամանակ (1986 թ.) տեղում պարզվեց, որ այդ եկեղեցին այդպես էլ կիսատ է մնացել և կառուցումը չի ավարտվել։ Ներկայումս այդ շենքն էլ գոյություն չունի։

Գյուրդաշենից 1 կմ հյուսիս կա մեկ այլ հին գերեզմանոց, ուր պահպանված տապանաքարերի մեծ մասը արդեն խրված է հողի մեջ։ Հնավայրը հայտնի է «Խատար» անվամբ։

Նաբշեն։ Փոքր գյուղ է, Գյուրջևանից 4—5 կմ հյուսիս։ Գյուղի անվան ամենահին հիշատակությանը հանդիպում ենք Հնդարի ավերակ եկեղեցու մոտի գերեզմանոցի տապանաքարերից մեկի՝ 1786 թ. արձանագրության մեջ։

Գյուղի փոքրիկ գերեզմանոցում պահպանված տապանագրերից հները վերաբերում էին XIX դ. սկզբներին, ավելի հները անարձանագիր են։

---

70 Մ. Բարխուտարյանց, Աղվանից երկիր և դրացիք, էջ 183։
71 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3684, թ. 13։
72 ՀՊԿՊԱ, թ. 14։
73 Մ. Բարխուտարյանց, Աղվանից երկիր և դրացիք, էջ 183։

Նորշենից 1 կմ արևմուտք՝ Գյանդխան ադրբեջանաբնակ փոքր գյուղից նույն ուղղությամբ 0,3 կմ հեռու, մացառապատ, հրվանդանաձև բլրի վրա տարածվում են հնագույն հայկական գերեզմանոցի մնացորդները։ Տեղում պահպանված տապանաքարերի զգալի մասն անտաշ սալաքարեր են, իսկ փոքր մասը՝ սրբատաշ ուղղանկյունաձև տապանաքարեր։ Դրանցից միայն մեկի վրա գտանք արձանագրության մնացորդ, իսկ մի քանիսին պատկերված էին նետ-աղեղ, գավազան, սափոր և այլն։ Քանդակազարդված տապանաքարերի պատկերները մեծ ընդհանրություն ունեն գավառի՝ XIV—XVI դդ. մի շարք հին գերեզմանոցներում (Ամուրավան, Ղալակա, Գիրք, Գյուրդա, Մատրասա, Սաղիան և այլն) պահպանված տապանաքարերի քանդակների հետ։



Նկ. 4. Տապանաքար Գյանդխան գյուղի հին գերեզմանոցում։

Հայկական հին գերեզմանոց կա նաև Նորշենից շուրջ 18 կմ հյուսիս-արևելք, Քյալվա ադրբեջանաբնակ գյուղի մոտ։

Քոհլուճ (Քյովլուջ). Գյուղը գտնվում է Գյուրջևանից 5—6 կմ հարավ-արևելք, Աղսու գետի աջ բարձրադիր անտառածածկ սարալանջին։ 1853 թ. գյուղն ուներ 27 տուն[74]։ Գյուղի պատմական հուշարձաններից մեկը՝ փայտածածկ ս. Աստվածածին եկեղեցին, ներկայումս գոյություն չունի։ Հարկ է նշել, որ Քոհլուճի այդ եկեղեցու վերաբերյալ հիշատակություն է պահպանվել դեռևս 1838 թ.[75]։ Հայտնի է, որ 1878 թ. մայիսի 20-ին գյուղի հասարակությունը դիմել է հոգևոր կառավարությանը՝ արդեն քայքայված եկեղեցին նորոգելու թույլտվություն ստանալու կապակցությամբ[76]։ 1884 թ. Շամախու թեմի առաջնորդ Թադեոս եպիսկոպոսը Էջմիածնի սինոդին հայտնել է Քոհլուճի եկեղեցին նորոգված, օծված և այնտեղ վերստին ժամերգու-

74 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2914, թ. 99։
75 ՀՊԿՊԱ, գ. 3426, թ. 31։
76 ՀՊԿՊԱ, գ. 6978, թ. 1։

թյուն կատարված լինելու մասին[77]։ 1893 թ. նույն եկեղեցին դարձյալ գտնվում էր քայքայված վիճակում։ Նախատեսվում էր կատարել ծածկի թիթեղապատման աշխատանքներ[78]։ Ինչպես եկեղեցին, այնպես էլ ողջ գյուղը ավերվել է 1918 թ.։

Քոհլուճի գերեզմանոցը գտնվում է գյուղի արևմտյան ծայրում։ Տեղում պահպանվել են հին տապանաքարեր, սակայն արձանագրվածները վերջերում են XIX—XX դդ.։ Գերեզմանատան մոտի աղբյուրը ունեցել է հետևյալ արձանագրությունը. ՅԻՇԱՏԱԿ է ԱՅՍ ԱՂԲԻՒՐ ՔԵՈՀԼԻՃԵՑԻ ԽՈԻՍԱՁՒ ՈՒԴԻ ԲԱԲԱ, ԱՍՐԻ, ԴԱՆԻԷԼ, ԽԱՉԱՆ, ՄԱՅՐԻ ՄԷՐ Ի 1849[79]։ Քաջբերյանը նշում է. «Հին ժամանակներում Քեօհլիջը նույն անունով եղել է այժմյան տեղից շատ ցածր, նախկին խճուղու վերա, Քյուրտամիրի դաշտի հյուսիսային սահմաններում, ուր երևում են ավերակները և այժմ։ Տեղափոխությունը կատարվել է երևի վատ կլիմայական պատճառներից»[80]։

Գերեզմանատան մուտքի մոտ կառուցված է հուշարձան և հիշատակ Մեծ հայրենականում զոհված քոհլուճցի ռազմիկներին։

Թալիշ։ Մինչև 1918 թ. հայաբնակ գյուղ էր, ներկայումս գյուղատեղի է, Քոհլուճից 6—7 կմ արևելք, Աղսու գետի ձախ կողմում, Քոհլուճին գեմհանդիման։ Թալիշ շենի հայ բնակչության հնչեղ մնացորդները, որ 1918—19 թթ. կոտորածների ժամանակ բրվել էին զանազան վայրեր, 1937 թ. վերջնականապես հաստատվել են Զարխու (այժմ՝ Շիրվանզադե գյուղ, Նամախու շրջան) գյուղում։

Արդեն ծառերով ու մացառներով ծածկված գյուղատեղիի ծայրում պահպանվում են XIX—XX դդ. արձանագրություններով ավելի քան 15 տապանաքար։ Երբեմնի ծաղկուն ու մարդաշատ հայոց Թալիշ գյուղի տնատեղերի զգալի մասը ևս արդեն ծածկվել է մացառներով։

ИЗ ИСТОРИИ СЕЛЕНИЙ ГАВАРА ШАМАХИ

С. Г. КАРАПЕТЯН

Резюме

Изучение сохранившихся историко-архитектурных памятников, летописных и архивных данных показывает, что гавар Шамахи (Ширван) вместе с окружающими гаварами уже в древние времена был заселен армянами. Но в середине XVIII в. в результате насильственной мусульманизации численность армянского населения резко сократилась. Еще во второй половине XIX в. около 50 армянских селений гавара продолжали жить интенсивной жизнью, которые, однако, были варварски уничтожены османскими и мусаватистскими ордами. Ныне лишь ничтожная часть этих сел заселена армянами. В этих, а также в азербайджанских селах, в которых раньше жили армяне, сохранились памятники армянской культуры, к примеру в селениях древнего гавара Шамахи, находящихся на территории административного района Ахсу.

---

77 ՀՊԿՊԱ, թ. 3։

78 ՀՊԿՊԱ, գ. 8916, թ. 1։

79 ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 139, թ. 44։

80 Նույն տեղում։

FROM THE HISTORY OF ARMENIAN SETTLEMENTS IN THE DISTRICT OF SHAMAKHI

S. G. KARAPETIAN

S u m m a r y

A study of preserved historical and architectural monuments, data of chronicles and archives shows that the district of Shamakhi and its surrounding regions were, already in ancient times, inhabited by Armenians. But in the middle of the 18th century, as a result of the violence of Islam, the number of the Armenian inhabitants greatly decreased. Still in the second half of the 19th century about 50 Armenian settlements of the district continued to live an intensive life, which was, however, barbarously annihilated by the Ottoman and Musavatist hordes. At present only an insignificant part of those villages are inhabited by Armenians. In those as well as in Azerbaijani villages, where Armenians had lived before, Armenian relics of culture have been preserved. This article presents relics of Armenian settlements in the ancient district of Shamakhi on the territory of the administrative district of Akhsoo.